ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ №85/3-Լ «08» 05 2026թ.

2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության կարգի» 17-րդ կետը, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկանի զեկուցագիրը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. 2026/2027 ուսումնական տարում ԵՊՀ «Հոգեբանություն» մասնագիտության «Ընտանիքի հոգեբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի առկա ուսուցման ձևով 2-րդ փուլի ընդունելության համար սահմանել հետևյալ պարտադիր պահանջներից որևէ մեկը.

- «Հոգեբանություն» մասնագիտությամբ բակալավրի բազային կրթություն
- Հարակից մասնագիտությամբ («Մանկավարժություն», «Սոցիալական մանկավարժություն», «Փիլիսոփայություն», «Սոցիոլոգիա», «Սոցիալական աշխատանք», «Կենսաբանություն», «Բուժական գործ») կրթություն առկայություն
- «Մանկավարժի» լրացուցիչ որակավորման առկայություն
- Մասնագիտական ոլորտում 3-5 տարվա աշխատանքային փորձը հավաստող տեղեկանքի առկայություն:

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումներին:

Ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան